ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/06

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Գասպարյանի

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Գագիկ Ջանջուղազյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 17.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը.

3. Պարտավորեցնել «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ներկայանալով նիստին՝ Սոցիալական ապահովության ծառայության ներկայացուցիչը հայտնել է, որ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/05 ծածկագրով քննության է առնվում «Այթիռեսուրսիս» ՍՊԸ կողմից ներկայացված բողոքը, որի շրջանակներում համանման բողոք է ներկայացրել նաև սույն բողոքը ներկայացրած «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ն՝ նույն պահանջներով և հիմնավորումներով:

2. <u>ԳԲՔԱ-LO-2019/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝

Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը.

3. Պարտավորեցնել «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ներկայանալով նիստի՝ Սոցիալական ապահովության ծառայության ներկայացուցիչը հայտնել է, որ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/05 ծածկագրով քննության է առնվում «Այթիռեսուրսիս» ՍՊԸ կողմից

ներկայացված բողոքը, որի շրջանակներում համանման բողոք է ներկայացրել նաև սույն բողոքը ներկայացրած «Այթիռեսուրսիս» ՍՊԸ -ն՝ նույն պահանջներով և հիմնավորումներով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության, հաշվի առնելով, որ «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է համանման բողոք՝ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/05 ծածկագով բողոքի քննության շրջանակներում «Այթիռեսուրսիս» ՍՊԸ կողմից ներկայացված բողոքի համանմանը և սկզբնական ու համանման բողոքների համատեղ քննությունը կարող է ապահովել գործի արդյունավետ լուծումը, քանի որ դրանք ներկայացված են նույն գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացված որոշումների դեմ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացրած բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ